Իբրև կարևոր կէտ մը կը նշանակեմ և այն, որ նոր առաքեալը ըստ հետագայ նամակին՝ իր պաշտօնին կը ձեռնարկէ 1735 Հոկտ. 8ին. այսպէս ինքնին կ'ուղղուի ուրեմն Վանքիս Ժամանակագրութեան այն անցքը՝ որ փոխանակ 1735ի՝ դրուեր է 1736[1]։

Նամակագիրս յետ նշանակելու Պելկրատի մէջ կրած իր առաջին տպաւորութիւնները՝ կը տեղեկագրէ նաև Ռուսիոյ և Աւստրիոյ միջև տեղի ունեցած պատերազմական դէպքեր։

Գերյարգուրեան քում և հօր մերոյ արբեաի

Ողջունիւ սիրոյ յայտ լիցի ամենապատիւ հօր մերոյ, զի յութնում հոկտեմբերի հազիւ հասի ի պէլղրատ։ Եւ յաւուր տօնի սրբոյն պետրոսի ալգանթարա եկեալ վիգարն որ աստ էր, յանձնեաց ինձ զեկեղեցին և զժողովուրդն, որք ներկայք էին այնորիկ հանդիսութեան, համառօտութեամբ բանից ոմանց շուրջ զհնազանդութեամբ առ նորագոյն հովիւս իւրեանց։ Բայց նախ քան զայս իրակութիւնս արարեալ էաք զամենայն այցելութիւնս, թէ՝ իշխանաց քաղաքիս և թէ մեծաւորաց Վանորէից, ներկայացուցանել զ[ը]նծայս, բաց ի յեպիսկոպոսէ, որ չէ տակաւին եկեալ ի Վէննայու։

Իսկ հայ ժողովուրդն երևեցաւ ինձ յուժ բարի. և յուսամ թէ այնպէս երևեսցին միշտ։... 5 ոսկի խարշլըխէն յաւելաւ ինձ իբրու ոսկի և կէս, վասն զի յայն 14 աւուրս յորս ի Վիէննա կացի՝ զոչ ինչ ծախեցի սակս կերակրոյ. յորս հայքն ի ճաշ կոչեցին զիս կարգաւ... և եթէ յաւելի ևս մնայի ի Վիէննա, զնոյն առնէին ինձ. հատուսցէ տէր ըստ արդեանց իւրեանց զվարձս։...

. . . Նորագոյն լուր ի կողմանս մեր այս է, զի ի թիրօլու բանակէ կայսերն հայ մի անդ գոլով, գրեաց աստ եղեալ հայոց զգիր, և ասէ, թէ ճերմակ լաթն ընդ սաւօեարտի բանակին յանդգնեցան մտանել ընդ նեղ կիրճն թիրօլ գաւառին։ Եւ բնակիչք երկրին պատրաս[տ]ք և վառեալք գոլով ի կիրճն, տուեալք իցեն զմեծ ջարդ, և կոտորում ճերմակ լաթից, ևս առաւել սաւօից. և այնպէս ամօթով և մեծաւ վնասու իւրեանց յետս դարձեալ։ Եւ ասեն իշխանք քաղաքիս, թէ թիրօլցիքն բազմիցս տուեալք իցեն նոցա զնման սմին սուր ի յանցեալ և ի հին պատերազմունս, որպէս և մեք լսէաք զայս յայդրէն։ Իսկ Ֆիլիզպօրկու այս ինչ գրեցաւ. թէ մինչ քառասուն հազար զօրքն մոսկովու հեռի իբրու ժամաւ միով ճանապարհի ի բանակէ կայսերն բանակեալ իցէ, յանկարծ ֆռանսուզն զօրու մեծաւ դիմեալ գոլ ի վերայ մոսկովու։ Իսկ մոսկովի ճէնէրալն նախապէս գիտակ գոլով նոցին անկարծ գալստեանն, վառեալ իցէ զզօրս իւր մեծաւ պատրաստութեամբ և սպասեալ գալստեան նոցին։ Ապա ֆռանսուզն ի գիշերայն և անչշնչիւ, եկեալ կարի մերձեցեալ իցէ բանակի մոսկովին, զի յարշալոյսն յանկարծ կալեալ ջարդեսցէ։ Այլ մոսկովն, մինչ նոքա սպասեն այն լուսոյն, կանխագոյն քան զնոսա, դիմէ ի վերայ նոցա, և տայ անխնայ ջարդ մի, և տևէ մարտն մինչև 3 ժամ աւուրն և առեալ զամենայն կահ և կարասի դառնայ ի բանակ իւր։ Եւ սոյն յաղթանակող մոսկովքս յայժմ ցրուեալ ի գաւառս ֆռանսու, ուր 5,1000 և ուր 10,1000 անհնարինս նեղեն զնոսա և կողոպտեն զգիւղս և զքաղաքս անպարիսպս։...

1735 հոկտեմբերի 20
[Պելկրատ]

Ստրուկ ծառայ տէրութեան քոյ
Հայր Յակոբ [Բուզայեան]

---

2. Թորոսեան. Վարք Մխիթարայ. էջ 342։